

NOUVEL HORAIRE

Du lundi au vendredi
Service de Caisse: de 8h à 14h
Service Commercial: de 8h à 17h

Samedi:
Service de Caisse / Service Commercial:
de 8h à 13h

1579 1332
www.lib.com / E-mail: info@lib.com
BANQUE LIBANO-FRANÇAISE

ԱԶՏԱԳ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE
ازتاك حيدرة يومية سياسية وأدبية - الدرة السؤلة، إيشا درويشيان

1500 L.Ո. 7694 ՏԱՐԻ, ԹԻԻ 167 (21509) ՀԻՆԳՇԱՔԹԻ, 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

TONY'S FRESH & CRUSTY FOOD
غير الشكل وحافظ على النوعية
صحنات وآكل جاهز
اطلبها من
السوبر ماركت
Charfan Est. - St. Elie Residence - Rawda - Telefax: 961 1 683 886
P.O.Box: 2203 Jounieh-Labnan
website: www.tonysfood.com - E-mail: tonysfood@tonysfood.com

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԱՅՅԵԼԵՑ ԴԱՄԱՍԿՈՍ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկկայնեց Դամասկոս, ուր ընդունուեցաւ Սուրիոյ վարչապետ Մոհամէտ Նաժի Օրարիի կողմէ: Հարիրի փոխանցեց իր շնորհաւորութիւնները սուրիական նոր կառավարութեան կազմութեան առիթով:

Հանդիպումին քննարկուած առարկայ դարձան շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ Լիբանան - Սուրիա երկկողմանի յարաբերութիւններն ու գործակցութիւնը:

«Քննարկուեցան երկու երկիրներուն միջեւ ազգային արտադրութիւններու փոխանակման անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ Լիբանանի ու Սուրիոյ միացեալ շահերուն ծառայող մարպերու մէջ գործակցութեան նոր գործելաձեւի որդեգրման անհրաժեշտութիւնը», հաղորդեց «Սանա» լրատու գործակալութիւնը:

Վարչապետ Հարիրի հանդիպում մը ունեցաւ նաեւ Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հայիմ իսատամի հետ եւ դարձաւ անոր ճաշի հիւրը, ներկայութեամբ սուրիացի իր պաշտօնակիցին՝ Օրարիի:

Վարչապետը յետմիջօրէին վերադարձաւ Պէյրութ:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ՕՊԷՅՏԻ ԵԼՈՅԹԸ՝ ՄԱԿԻ 58ԻԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Արտաքին գործոց եւ արտերկրի իրանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ, որ կը գտնուի Նի Եորք, ուր կը մասնակցի ՄԱԿի 58րդ Ընդհանուր Ժողովին, երէկ արտասանեց Լիբանանի խօսքը, որուն մէջ շեշտեց, թէ առանց քաղաքական լուծումի ապահովութիւն չկայ:

Ան աւելցուց նաեւ, որ քաղաքական լուծումը չի կրնար մասնակի ըլլալ, այլ պէտք է ըլլայ ամբողջական. պարփակելով Մապարէի Շրպան Լիբանանի վերադարձնելու, սուրիական հողերը վերադարձնելու (1967 Յունիսի սահմաններ), պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքը ապահովելու, մայրաքաղաք Երուսաղէմով պաղեստինեան անկախ պետութիւն հիմնելու եւ իսրայէլեան բռնազրաւումներուն վերջ տալու միջազգային որոշումներու գործադրութիւնը:

Օպէյտ դիտել տուաւ, որ Լիբանանի եւ Միջին Արեւելքի մէջ կրկնուող վարչապետութիւն մը, ինչ որ մերժելի է: Ան լուսարձակի տակ առաւ Լիբանանի հետ սահմանային կայունութիւնը խախտող իսրայէլեան օդային թէ ցամաքային փորձերը, իրանանցի գերիներ արգելափակումը պահելու Իսրայէլի յամառութիւնը, Իսրայէլի տրամադրութեան տակ գտնուող հարաւային Լիբանանի մէջ զենեղում ակններու շարք՝ էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ԳԵԱՅԱՏԷ Յ. Յ. Դ.Ի ԱՆՆԱԽԵՆԹԱՅ ՆԱԽԱՉԵՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան դրական գնահատեց համաձայնական կառավարութեան կազմութեան 100 օրէնք ժողովուրդին հաշտութեան ներկայացնելու: Հ. Յ. Դ.ի աննախընթաց նախաձեռնութիւնը: Ան երէկ նշեց, որ չի բաժնէր այն կարծիքը, թէ Հ. Յ. Դ.ի վեկուցումն է կարելի է հետեցնել, որ համաձայնական դաշինքին մէջ տարակարծութիւններ գոյութիւն ունին: «Չեկուցումը իր ամբողջութեան մէջ պէտք է դիտել եւ հարցերը չառանձնացնել՝ անոնց տալով այլ մեկնաբանութիւններ», ըսաւ Անդրանիկ Մարգարեան, աւելցնելով, որ համաձայնական դաշինքին մէջ հակասութիւններ կամ տարակարծութիւններ չկան:

ԱՅՏՊԴԻՍ ԿՈՉՈՒԱԾ «ՀԱՅ - ԹՐԲԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎ»Ի ԹԻՖԼԻՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ

Այսպէս կոչուած «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողով»ի հանդիպումը, որ պիտի կայանար Թիֆլիսի մէջ՝ Սեպտեմբեր 27-28ին, յետաձգուած է անորոշ թուականով: Յանձնաժողովի անդամ Դաւիթ Յովհաննիսեան «Արմէնփրէս»ին յայտնած է, թէ հանդիպումին յետաձգումին «պատճառը կրնայ լինել ինչ որ յանձնաժողովի անդամներն ունանք քաղաքացիական պայքարները»:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, որ կը մասնակցի ՄԱԿի 58րդ Ընդհանուր Ժողովին, Նի Եորքի մէջ հանդիպումներ ունեցած է Լիբանանի արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտի, Արժանքի մի Բումբիոյ արտաքին գործոց նախարարներ Ռաֆայէլ Պիլեսայի եւ Միրզա Ծոստամյի, Քուպայի արտաքին գործոց նախարարի տեղակալ Ապտէլարա Մորեմոյի եւ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարի քարտուղար Պիլ Ռեմքլի հետ:

Հանդիպումներուն ընթացքին քննարկուած են երկկողմանի յարաբերութիւններուն խորացման, տնտեսական կապերու ընդլայնման, միջազգային կազմակերպութիւններու մէջ համագործակցութեան զարգացման առնչուող խնդիրներ:

Այսօր կը նախատեսուի նախարար Օսկանեանի ելոյթը ՄԱԿի Ընդհանուր Ժողովի նիստին:

ՉՈՒԻՑԵՐԻՈՅ ՎՕ ԲԱՆՔՈՆԸ ԿԸ ՇԵՏԵԻԻ ԺԸՆԵԻԻ ԲԱՆԹՈՆԻ ՕՐԻՆԱԿԻՆ ԵՒ ԿԸ ՃԱՆՉՆԱՅ ԸԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Չուիցերիոյ ՎՕ քանթոնը Սեպտեմբեր 23ին պաշտօնապէս ճանչցաւ Հայկական Յեղասպանութիւնը: Քանթոնի խորհրդարանը 74 թեր, 64 դէմ եւ 9 ձեռնպահ քուէներով որդեգրած է Մասսիմօ Սանտրիի ներկայացուցած բանաձեւը:

Փաստաթուղթը խորհրդանշական կը նկատէ այն հանգամանքը, որ ճանաչման որոշումը կ'ընդունուի Լոզանի մէջ, ուր 1923ին դաշնակիցներու եւ Թուրքիոյ միջեւ կնքուած պայմանագիրով «Հայաստան ջնջուեցաւ քարտէսէն»: «Պահը եկած է, որպէսզի ՎՕ քանթոնը պաշտօնապէս ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը», ընդգծած է բանաձեւը: Ան միաժամանակ կ'արձանագրէ, որ որոշումը «ՎՕ քանթոնը կը նպաստէ թուրքերու եւ հայերու միջեւ արդար խաղաղութեան հաստատումին, խաղաղութիւն, որուն գլխաւոր խոչընդոտը ժխտման քաղաքականութիւնն է, որ աւելի էս կը խորացնէ ամբողջ ժողովուրդի մը ցաւն ու տառապանքը»:

Չուիցերիոյ Ժընեւ քանթոնի խորհրդարանը 1998ին, իսկ քանթոնի կառավարութիւնը 2001ին պաշտօնապէս ճանչցած էին Հայկական Յեղասպանութիւնը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Լեռնային Ղարաբաղի ղեկավարութեան պատուիրակութիւն մը՝ Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկարի Դուկասեանի, Ազգային Ժողովի նախագահ Օլէկ Եսայեանի եւ վարչապետ Անուշաւան Դանիէլեանի մասնակցութեամբ, երէկ այցելեց Հայաստանի Ազգային Ժողով, ուր հանդիպում ունեցաւ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեանի, Ազգային Ժողովի մշտական յանձնաժողովներու նախագահներու, խորհրդարանական խմբակցութիւններու ղեկավարներուն եւ ներկայացուցիչներուն հետ:

Շարք՝ էջ 3

ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ՄԻԱՅԵԱԼ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԼԱԻԱԳՈՅՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ Է ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՉԱՐԵԱՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Ռուսիոյ Անվտանգութեան ծառայութեան սահմանապահ վարչութեան նորաւըջանակ պետը՝ ԿՕՐ. Սերգէյ Պոնտարեւը: Նախագահը դիտել տուած է, թէ սահմաններու միացեալ պաշտպանութիւնը լուսագոյն վկայութիւնն է հայ-ռուսական միջպետական յարաբերութիւններու բարձր մակարդակին: Քոչարեան ընդգծած է, թէ Հայաստան միշտ հիւրընկալ վերաբերմունք ցուցաբերած է ռուս սահմանապահ ուժերուն նկատմամբ: Ան շնորհաւորած է Պոնտարեւը՝ անոր նոր պաշտօնին համար:



ՊՈՒՅ ԿԸ ՇՆՈՐԸԱՒՈՐԷ ԲՈՉԱՐԵԱՆԸ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ Հայաստանի վերանկախութեան 12րդ տարեդարձին առիթով շնորհաւորական ուղերձ մը յղած է Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանին: «Միացեալ Նահանգներու ժողովուրդին անունով կը շնորհաւորեմ անկախութեան 12րդ տարեդարձը: Հայաստան միշտ եղած է Միացեալ Նահանգներու արժանի գործընկերը՝ ահաբեկչութեան դէմ պատերազմին մէջ: Հանդիպում եմ, որ երկու երկիրներու ապագային համար շատ կարեւոր այդ նախաձեռնութեան մէջ մեր համագործակցութիւնը կը շարունակուի եւ կ'ընդլայնի հետագային», նշուած է Պուշի սամակին մէջ, որ նաեւ անդրադարձած է Հայաստանի մէջ քաղաքական եւ տնտեսական բարեփոխումներուն:

ԱԿԱՆՈՒԱԾ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՊԱՅԹՈՒՄ ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ

Իրաքցի մը սպաննուեցաւ եւ 21 ուրիշներ վիրաւորուեցան երէկ, երբ ականուած ինքնաշարժ մը պայթեցաւ Պաղտատի մէջ: Իսկ Հիւսիսի մէջ սպաննուեցան երկու իրաքցիներ, որոնք փախուստ կու տային իրենց գիւղէն, ուր խուկարկութիւններ տեղի կ'ունենային:

Ականատեսներ յայտնեցին, որ Պաղտատի պայթումը տեղի ունեցաւ, երբ օթոպիւս մը բախեցաւ ճամբուն վրայ դրուած ականու մը վրայ: Պայթումէն քանի մը վայրկեան առաջ, նոյն ճամբային անցած էր ամերիկեան պիւնտրական փոխադրարար մը, որ ըստ երեւոյթին թիրախն էր ականին, որուն սակայն չէր բախած: Ամերիկացի պիւնտրական բանբեր մը հաստատեց պայթումը, առանց սակայն մանրամասնութիւններ տա-

Շարք՝ էջ 2

ԱԿՆԱՐԿ

ՅԱՊԱՂԱԾ ՀԵՐՔՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետութեան մշակույթի փոխ նախարար Կարէն Արիստակէսեանին վերագրուող ելոյթները, որոնք հրատարակուեցան թրքական մամուլին կողմէ, կը շարունակեն իրենց վրայ կեղծոնացած պահել հայկական լրատուամիջոցներու լուսարձակները:

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի պաշտօնաթերթ «Երկիր»ի հարցապնդումներուն ի պատասխան՝ Արիստակէսեան հերքած է թրքական մամուլին իր անձին վերագրած արտայայտութիւնները: Երէկ միայն, մշակույթի նախարար Թամարա Պօղոսեան խորհրդարանի բեմէն իր կարգին պաշտօնապէս հերքեց իր տեղակալի անունին կապուած քաղաքական գայթակղութեան տուն տուող պատճառը: Նկատի ունենալով երկու օր առաջուան «Երկիր»ի լրատուութիւնը, որուն համաձայն Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը պաշտօնապէս բացատրութիւն պահանջած էր մշակույթի նախարարութեանէն կատարածին մասին, ենթադրել կու տայ, որ նախարար Պօղոսեանի յայտարարութիւնները նաեւ կը ծառայէին պահանջուած այդ բացատրութիւնը բաւարարելու:

Յամենայնդէպս գոնէ մինչ այժմ անպատասխան կը մնան Հ. Յ. Դ. պատերազմաորական խմբակցութեան ղեկավար ընկ. Լեւոն Մկրտչեանի բարձրացուցած բողոքն ու մտահոգութիւնները՝ առ հասարակ Անթալիոյ մէջ տեղի ունեցածին եւ յատկապէս Թուրքիոյ մշակույթի նախարարին «Միլիիթթ» թերթին կատարած յայտարարութիւններուն վերաբերեալ:

Նման մտահոգութեան մը արժարձումն ու անոր հետեւողական հետապնդումի աշխատանքը միայն Դաշնակցութեան հարցը պէտք չէ ըլլալ: Նման ելոյթներ կը հարուածեն Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքական վարքագիծին եւ իբրեւ այդպիսին անոնց հերքումի կամ բացատրութեան պահանջները հայութեան բոլոր քաղաքական ուժերուն կողմէ պէտք է արժարձուին:

Նման ելոյթներու հերքումները՝ խնդրոյ առարկայ անձնաւորութիւններուն կողմէ, ներհայաստանեան քաղաքական տեղեկակառուարական դաշտերու մէջ պէտք չէ սահմանափակուին: Մշակույթի փոխ նախարարը իր հասցէին կատարուած վերագրումներուն հերքումը պէտք է կատարէր Անթալիոյ մէջ եւ «Միլիիթթ» թերթին: Պահ մը նոյնիսկ նկատի ունենալով թրքական մամուլին բացարձակ խեղաթիւրումները, երեսնեան յապաղած հերքումները կը կորսնցնեն հարցին շահարկման գործընթացը հարուածելու իրենց պղծեցիկութիւնը:

«Ա.»

# ՆԱԽԱԳԱՀ ԼԱՅՈՒՏ ԵՒ ՊՐՐԻ ԲՆԱՐԿԵՑԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Նախագահ Կ. Լավրենտևի և Պրիմաչովի միջև քննարկվում է իրապետական Նախագահի Պրիմաչովի, որուն հետ քննարկվեց տեղական և շրջանային նորագոյն իրադարձությունները:

Հանդիպումին ետք Պրիմաչովը, որ նախագահ Լավրենտևի յայտնած է իտալիա իր պաշտոնական այցելության և հանդիպումներուն մասին՝ իտալիոյ նախագահին, Շերապոնտի նախագահին, խորհրդարանի նախագահին, Յովհաննես Պողոս Բ. պապին և արտաքին գործոց նախարարին հետ:

Պրիմաչովի այցելուները, որ վատիկան կը մաղթէ, որ արարները վատիկան վատիկան կեցումներին և միասնաբար որդեգրեն միացեալ կեցումները: Ան աւելցուց, որ իբրև Եւրոպական Միութեան ներկայ նստաշրջանի նախագահ՝ իտալիա ամէն ջանք ի գործ կը դնէ կայունացնելու համար Միջին Արեւելքի կայունութիւնը:

Պրիմաչով նշեց, որ բարեբախտաբար Լիբանանի կեցումները դրամատուներու գաղտնապահութեան և իրադարձութեան նկատմամբ յստակ է և շեշտեց այս երկու «հաստատութիւն»ներուն պահպանումը և անխախտ պահելու անհրաժեշտութիւնը:

## ՄԱՀԱԶԴ

- Տիկին Ալիս Թովմասեան և գաւակները՝ Աննա-Մարիա, Գուրգէն և Սինթիա
- Տէր և տիկին Յակոբ և Նուէր Թովմասեան և գաւակը՝ Ժաք
- Տէր և տիկին Պողոս և Մատիլդ Թովմասեան և գաւակը՝ Լեոն
- Տիկին Սիրարփի Համաձեան
- Տէր և տիկին Նազարէթ և Տիգրանուհի Գոգաձեան
- Տէր և տիկին Կիւլպէնկ և Զարուհ Կիւլպէնկ և գաւակը՝ Ծոնի
- Տէր և տիկին Յարութ և Անի Տարազեան և գաւակները՝ Կիւլպէնկ և Բաֆֆի
- Տիկին Արմինէ Գալսեան և գաւակները՝

- Ալէք. Սանտրա և Բրիտտին
- Տէր և տիկին Ալեքսի և Կարո Տարազեան
- Տէր և տիկին Հրանդ և Կրիտա Յովսէփեան և գաւակները՝ Մասիս և Նորա
- Գարրիէլեան ընտանիք
- Թաշճեան ընտանիք
- Մարկոսեան ընտանիք
- Պալեան ընտանիք
- Գասպեան ընտանիք
- Եսփիճեան ընտանիք
- և Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, զեռակրին և հարազատին՝

## ՄԱՅԱԿ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ (Ծնեալ՝ Լիբանան, 1945ին)

Մայր, որ պատահեցաւ Կիրակի, 21 Սեպտեմբեր 2003ին, ինքնաշարժի արկածի հետեւանքով, Լուս Անճելլի մէջ: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 26 Սեպտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Կլեմէնտի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Hollywood Hills Forest Lawn գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրև մահազոյ:

## ՄԱՀԱԶԴ

- Տիար Վարդան Յովհաննէսեան
- Տիար Կարո Յովհաննէսեան
- Տէր և տիկին Յովիկ Յովհաննէսեան
- Տիար Բաֆֆի Յովհաննէսեան
- Տէր և տիկին Մանուէլ Պէճարեան և ընտանիք
- Տէր և տիկին Արա Եագուպեան և ընտանիք
- Տէր և տիկին Դրո Բէհէճեան և ընտանիք
- Շահինեան ընտանիք
- Սատր ընտանիք
- և Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր և հարազատին՝

## ՄԱՐԻ ԹԵՐԷԶ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ (Ծնեալ՝ 1933ին)

Մայր, որ պատահեցաւ Երկուշաբթի, 22 Սեպտեմբեր 2003, գիշերուան ժամը 11:30ին, յետ հիւանդութեան: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 26 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 4:30ին, Պուրճ Համուտի Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրև մահազոյ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին նոյն օրը, եկեղեցւոյ սրահին մէջ: Իսկ Շաբաթ 27 և Կիրակի 28 Սեպտեմբերին հանգուցեալին բնակարանը, Պուրճ Համուտ, «Լասուպ» շէնք, Գ. յարկ (Ս. Ագնէս վարձարանի ետեւի թաղ):

# ՊՐՐԻ ԻՐ ԿԵՑՈՒԱԾԵՆԵՐԸ ԱՐՏԱՅԱՅԵՑ 50 ԵՐԵՍՓՈՒՍԱՆՆԵՐՈՒ

Խորհրդարանի նախագահ Նեպի Պրիմաչովի երկ խորհրդարանին մէջ շաբաթական հերթական իր հանդիպումը ունեցաւ խորհրդարանի անդամներու հետ, որոնց կեկուցեց իտալիա և Վատիկան կատարած իր պաշտօնական այցելութեան մասին:

Պրիմաչով իր խօսքին մէջ շեշտեց անհրաժեշտութիւնը Լիբանանի որդեգրած երկու սկզբունքներուն պահպանման վրայ: Սկզբունքներն են՝ լիբանանեան դրամատուներու մէջ տիրող գաղտնապահութեան դրուծիւնը, ինչպէս նաեւ պարակցութիւնը դիմադրութեան:

Անդրադառնալով կեդրոնական Դրամատուին պահանջուող Համաս շարժումի ղեկավարներուն հաշուեցոյցներուն, Պրիմաչով ուղղեց քննութիւնը քանակա՝ գիտնալու համար այդ պահանջին ծախքերը, հաւաստելով, որ ոչ մէկը կ'ուզէ միւսին «գլուխը կտրել», բայց անհրաժեշտ է խուսափիլ սխալներ գործելէ:

Պրիմաչով դրուատեց Վատիկանի կեցումները Միջին Արեւելքի տագնապին գոյն և ընդգծեց, որ Եւրոպական Միութեան ներկայ նստաշրջանին իտալիոյ նախագահութիւնը արաբներուն իսկական առիթ մը կ'ընծայէ արաբական միացեալ կեցումները մը որդեգրելու համար:

Պրիմաչով երկ ընդունեց 50 երեսփոխաններ:

## ՊԵԹԸԼ ՍԸՄԱՀԱՅԻ ՅԻՇԵՑՈՒՑ ՌԻԱՇԻԿԹԸՆԻ ՊԱՀԱՆՁԸ...

Տեղեկատուութեան նախարար Միջին Սրմահա երկ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսենթ Պեթըլը, որուն հետ քննարկեց տեղական և շրջանային իրադարձութիւնները:

Պեթըլը Սրմահայի յիշեցուց Միացեալ Նահանգներու կողմէ կեդրոնական Դրամատուին պահանջուած պաշտօնական կազմակերպութիւններուն և ղեկավարներուն հաշուեցոյցներու պահանջը:

Սրմահա հանդիպումին ետք կատարած իր յայտարարութիւններուն մէջ յայտնեց, որ Մ. Նահանգներու կողմէ այս պահանջը թեքնիք հարց չէ, այլ՝ առնչուած է դիմադրութեան շարժումներու: Սրմահա վերահաստատեց լիբանանեան պետութեան կեցումները, որ յստակօրէն իրարմէ կը տարբերէ դիմադրութիւն ու ահաբեկչութիւն հասկացողութիւնները:

## ՆԱԽԱՐԱՐ ԹԱՊՊԱՐԱ ԼԻԲԱՆԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑ ՄԻԿԻԼԻՈՅ ԺՈՂՈՎԻՆ

Ներքին գործոց և արդարադատութեան նախարարութիւններու միացեալ մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ արդարադատութեան նախարար Պահիժ Թապպարայի, երկ Լիբանանը ներկայացուց կանխատեսուած ոճրագործութեան դէմ ՄԱԿի մղած արշաւի համաձայնագիրին ծիրէն ներս Սիկիլիոյ մէջ կայացող միջազգային խորհրդածոյցին մը:

Խորհրդածոյցը արարեցաւ շարք մը բանաձեւերով, որոնք արաբական երկիրներն ու միջազգային ընտանիքը մղեցին յանձնարարականագիրի մը, նկատել տալով, որ անիկա կրնայ ամրապնդել շրջանային և միջազգային մակարակներու վրայ օրինական, դատական և ապահովական գործակցութիւնը:

Թապպարա իր խօսքին մէջ նշեց, որ Լիբանան վերոնշեալ համաձայնագիրին կամ փրոթոգոլիս իմաստով յետամնաց երկիր մը չէ:

### ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ՕՊԷՅՏԻ

Ծարուցակուած Ա. ԷջԵԸ

Քարտէսը, ինչպէս նաեւ պաղեստինցի ժողովուրդին դէմ գործադրուող բռնարարները:

Օպէյտ ընդգծեց, որ Լիբանան իստի կը դատապարտէ ահաբեկչութիւնը իր բոլոր ձեւերով և կը խոստանայ գործակցիլ միջազգային ընտանիքին հետ՝ անոր դէմ պայքարելու: Սակայն, ան նկատել տուաւ, որ Լիբանան յստակօրէն տարբերութիւն կը դնէ ահաբեկչութեան և ժողովուրդի մը ապստաբարութեան և դիմադրութեան արդար իրաւունքին միջեւ:

Օպէյտ դրուատեց Իրաքի մէջ բռնատիրութեան վերջ տալու ՄԱԿի ի գործ դրած ջանքերը, մշակելու նոր սահմանադրութիւն մը և կայացնելու ապստ ընտրութիւններ:

### ԱԿԱՆՈՒԱԾ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՊԱՅԹՈՒՍ...

Ծարուցակուած Ա. ԷջԵԸ

Լու: Ականատես մը լուսաւ, որ օթոպիստի վարորդը եղած է պայթումի վոլը: Պայթումը նիւթական վնասներ պատճառած է նաեւ շրջակայքին: Այլ ականատես մը դիտել տուաւ, որ ռումբին թիրախը ամերիկացիներն էին, սակայն սխալմամբ իրաքցիներ եղած են թիրախը:

Պաղտատի հիւսիսը, Պաաքուպայի մէջ սպաննուեցան երկու իրաքցիներ, երրորդ մըն ալ վիրաւորուեցաւ, երբ ամերիկեան ուժեր կրակ բացին անոնց վրայ: Չիրաւորները կը խուսափէին բնակարանները, երբ իշեալ երեք փորձած են փախուստ տալ: Ամերիկեան աղբիւր մը հերքեց, որ սպանութիւն կատարուած է Պաաքուպայի մօտ:

Գործողութիւնները տեղի կ'ունենային այն պահուն, երբ Իրաքի իշխող խորհուրդը կաշկանդումներու կ'ենթարկէր մամուլն ու լրատու այլ միջոցները, սպանալով արգիլել այն կայաններն ու թերթերը, որոնց լրատուութիւնը վայրագութիւն կը հրահրէ, կամ Սատունը հետեւորդները «կը պաշտպանէ»: Իշխող խորհուրդը երեք-չարթի օր երկու շաբթուան համար փակեց «Ժապիրա» և «Արապիա» կայաններուն Պաղտատի քաղաքը յայտնեց, որ խորհուրդի անդամ Աբիլա Հաշիմի, որ մահափորձի ենթարկուած էր անցեալ կաշկանդութեան, բաւական մտահոգիչ վիճակի մէջ կը գտնուի: Ինթիֆա Քանապար ըսաւ, որ Հաշիմի վիճակը վատթարացած է:

### ԿՈՒՉՈՒԻՆ

● Այդ անորոյ շապիկ կարող փորձառու գործաւորուկները: Դիմել՝ հեռ. 01-259196:

### ԿՈՒՉՈՒԻ

● Երիտասարդ վաճառող մը հագուստեղէնի մարգին մէջ (փլաւիտ), ինքնաշարժ վարելու պայման: Դիմել՝ հեռ. 03-821600:

### ԱԿԱՐԿ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՇՄԱՆ ՅԱԳԹԱՐՇԱԻՐ ՀԱՍԱԻ ԼՈՉԱՆ

1969ին Ուրուկուէյէն սկսած Հայկական Ցեղասպանութեան միջազգային յաղթարշաւը կը շարունակուի:

Մեծ պետութեանց (Ռուսիա, Ֆրանսա) կողքին աւելի քան քսան այլ երկիրներ, ինչպէս նաեւ միջազգային տարբեր քաղաքներ, առաւել՝ Միացեալ Նահանգներու երեսունէ աւելի նահանգներ արդէն պաշտօնապէս ճանչցած են Հայկական Ցեղասպանութիւնը: Կը մնայ, որ Միացեալ Նահանգներ իբրև պետութիւն եւս ճանչնան պայն և իրենք ալ միանան արդարամիտներու շարքին: Յամենայնդէպ այդ մէկն ալ ուշ կամ կանուխ պիտի կատարուի, որովհետեւ հարցը հասունացած է արդէն Քոնկրէսին մէջ, ինչպէս նաեւ Ուաշինկթըն չի կրնար շարունակել իր կոյր ձեռնալուծ քաղաքականութիւնը, տրուած ըլլալով որ ան կը հանդիսանայ աշխարհի արդարութեան խնդրանքներէն մէկը... Որքան ալ ծանր կը ընեն դաշնակից Թուրքիոյ հետ անոր շահերը, տեղ մը ի վերջոյ ալ կարելի չէ ու անիմաստ է շողացող աստղին առջեւ վարագոյր քաշել...

Երկ, Չուիցերիոյ վօ քանթոնը միացաւ Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցողներու փառանգին: Չուիցերիական այլ քանթոններ (ժրնէ) արդէն բացած էին այդ ճամբան, հետեւաբար վստահ ենք, որ իր չէկոքութեամբ համբաւաւոր այս երկրին բարձրագոյն խորհրդարանը եւս ի վերջոյ պիտի միանայ իր ցամաքամասի «արդար»ներուն՝ Ֆրանսայի, Պելճիքայի, Յունաստանի, Վատիկանի ճայնին:

Հետաքրքրական է վօ քանթոնի պարագան: 1923ին Լոպանի մէջ կը կնքուէր տիրաւոյնակ դաշնագիրը թուրքերուն և Պաշնակիցներուն միջեւ, որուն հետեւանքով «քարտէսէն կը ջնջուէր Հայաստանը»: Այսօր, ուղիղ 80 տարի ետք, միեւնոյն Լոպանը, որ վօ քանթոնի մայրաքաղաքն է, կը ճանչնայ Հայկական Ցեղասպանութիւնը: Չուիցերիական պարագան, այլ՝ հայ ժողովուրդին անխախտ համոզումներուն և անկտորում կամքին արդիւնքը: Ամբողջ 80 տարի և աւելի, մեր ժողովուրդը ի Սփիւռս աշխարհի վառ պահեց իր դատը, տասնամեակներ ամբողջ մնաց պահանջատէր ու հաւատարիմ՝ իր նահատակներուն արեան կանչին և պայքարեցաւ առանձին, մինակը թիպարեց հոսանք ի վեր ու վերջապէս յաջողեցաւ բանալ մինչ այդ խուլ ձեւացող աշխարհին սկանչները: Այդ, անշուշտ որ աշխարհ նաեւ իր քաղաքական շահերը կը հետապնդէ և այսօր քաղաքական, տնտեսական, ընկերային ու բազմաթիւ այլ պատճառներով անոնց համար ձեռնտու է հայաստանի (կամ հակաթուրք, եթէ կ'ուզէք) քաղաքականութիւնը վարելը, ինչ որ հակառակ պատկերն էր նախորդ դարասկիզբին: Հիմա փոխուած են տուեալները, շրջուած են դերերը: Բայց այս բոլորին մէջ պիտի չմոռանանք և պիտի ընդունինք, որ եթէ չըլլային հայուն յամառ քանքերը, պիտի չփոխուէր աշխարհի քաղաքականութիւնը:

Ուրեմն, պէտք է շարունակենք նոյն թափով, նոյն համոզումով, նոյն վճռականութեամբ: Այսօր աւելի քան երբեք անհրաժեշտ է անցնող տասնամեակներու մեր հաւատքը հանդէպ մեր անկորնչելի դատին: Այսօր ունինք ապառ, անկախ հայրենիք, հյօր բանակ, պետականութիւն, զոր օրէ - օր քիչ մը աւելի պիտի ամրապնդենք ազգովին: Այդ, երբեմն - երբեմն անձնատուութեան, վտանգաւոր երկխօսութեան, քանի մը հարիւր միլիոնի համար թշնամիին հետ սահմաններու բացման շուտկոտութեան անխոհեմ ու դասալիք տրամադրութիւնները կը ինչեւ որոշ հոսանքներէ, սակայն վայրկեան առաջ պէտք է սրափիլ և օրինակ առնել... օտարներէն, որոնք փաստօրէն մէկը միւսին տեսնեն իրենց յանդուգն որոշումներով թափ կու տան Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանչման յաղթարշաւին, որ պիտի շարունակուի մինչեւ որ հերթը հասնի ցեղասպանին, որ իր կարգին պիտի ընդունի իր գործադրած ցեղասպանութիւնը:

Անգարա այլընտրանք չունի, իսկ հայկական կողմէն հնչող դասալիքութիւնը կը դադրի անպայման, որովհետեւ անկարելի է շրջանցել մեր ժողովուրդին համազգային շահերը, մանաւանդ անկարելի է հակառակի դարբերել ի վեր խարսխուած մեր ժողովուրդին առողջ տրամաբանութեան:

### ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՆՈՎԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 և 241274:



ՀԱՋԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՒ ԸՅՏ

# 12 ՄՕՏԵՆԱԿ ԽՆՃՈՅՔԻ ՄԵՂԱՆԻՆ, ԲԱՅՅ ԱՆՕԹԻ ՄՆԱԿ

Այնքան հանգիստ հոգեբանություններ խոստովանելով հանդերձ իր մեղքերն ու յանցանքները, Նարեկացիին պարբերաբար ամօթ կը զգայ իր ըսածներէն: Իրեն համար ծանր է այս ինքնաքննադատութիւնը, ամօթահար է Աստուծոյ առջև, բայց որքան ալ ամօթահար ըլլայ, գիտէ որ պատճառ չունի վարանելու: Աստուած բոլոր չարիքներուն կը պատասխանէ անսահման բարիքով:

Դուն մարդկութեան համար սահմանցիկ սա մեծագոյն օրէնքը:  
Չարը չարութեամբ չփոխարինել,  
Այլ մեկ օրուան մէջ եօթն անգամ մերել  
Եօթնասուն հեղ գործուած մեղքերը:

Կ'արժէ որ ընդգծենք այստեղ այն ինչ որ Նարեկացին կը տեսնէ որպէս մարդկութեան համար մեծագոյն օրէնք. չարին չպատասխանել չարութեամբ: Չարիքը փոխարինել բարիքով: Եւ օրը եօթն անգամ ներել, նոյնիսկ եթէ դիմացին եօթնասուն անգամ մեղանշած է: Այս է օրէնքը: Բայց քանի որ այս մէկը կը ներկայացուի որպէս մարդկութեան համար մեծագոյն օրէնք, կը նշանակէ որ օրը եօթն անգամ ներելու տրամադրութիւնը կը պահանջուի ո'չ թէ միայն Աստուծոյ, այլ նաեւ մարդուն: Մանաւանդ մարդէն: Աստուած իր չարութեամբներուն համար օրէնք սահմանելու պէտք չունի: Եթէ օրէնք կը սահմանէ, ասիկա մարդուն համար է միայն:

Բայց Նարեկացին մէկ հոգեբանութենէն դէպի միւս հոգեբանութիւն կը ճախրէ ու երբեմն ալ կ'իյնայ տառապալից հակասութիւններու մէջ: Վերի տողերէն քանի մը էջ վերջ Նարեկացին ահաւասիկ դարձեալ բացած է պաղատանքի գրուած մը: Եւ տեսնենք թէ ինչէ՞ր կան իր պաղատանքին մէջ.

Կ'աղաչեմ քեզի, բոլոր չարաչար ու տաժանելի Տառապանքներու վիշտ ու քախիծով,  
Մի՛ բազմապատկեր ցաւն իմ հեծուրքան:  
Մի՛ դառնապարտեր արդե՛ն պատուածս,  
Բազմաչարչարս մի՛ տանջել նորէն,  
Խարագանուածս մի՛ քանակոծեր,  
Մի՛ գլորեր գիս երբ ինկած եմ արդէն,  
Մի՛ հալածել տարագրուածս,  
Տագնապահարս մի՛ յանդիմաներ:  
Մի՛ ալեկոծեր իրախարուածս,  
Արդէ՛ն մուրիմ մէջ եմ, մի՛ կուրցներ գիս,  
Եւ ջարդուած եմ, մի՛ ջախջախեր գիս:  
Անկար հիւանդս՝ մի՛ մահացներ:

Եւ դեռ այսպէս կը շարունակուի: Բայց կ'արժէ որ կանգ առնենք պահ մը ու անդրադառնանք թէ Նարեկացին ինչպիսի հանճարեղ պատկերացումներով Աստուծոյ կը խնդրէ չբազմապատկել արգէն այն տառապանքն ու ցաւը որ կայ: Այստեղ այն ինչ որ հետաքրքրական է, արարքներու աստիճանաւորումն ու աստիճանաչափն է: Օրինակ՝ պատիժէն մէկ աստիճան վերը՝ բարոյական դատապարտութիւնն է: Մարմնական չարչարանքէն մէկ աստիճան վերը բարոյական տանջանքն է: Խարագանուելէն մէկ աստիճան վերը քանակոծուիլ է, դետին իյնալէն մէկ աստիճան վերը՝ անդունդէն վար գլորելն է, մեծից մէջ մնալէն մէկ աստիճան վերը կուրանալն է, հիւանդութենէն մէկ աստիճան վերը՝ մեռնիլ, մահուան դատապարտուիլն է:

Նարեկացին իր այս գրականաշունչ պաղատանքին մէջ կը խնդրէ որ Աստուած իր բարեգործական յատկութիւններով չհարուածէ իր չարագործ ծառան, այսինքն Աստուած իր բարիքները չհակադրէ իր մեղաւոր ծառային չարիքներուն, որովհետեւ Աստուած մեծ է, իսկ ինքը փոքր, Աստուած բնութեամբ բարի է, իսկ ինք ի բնէ չար, որովհետեւ Աստուած օրհնութեան ողորդ է, իսկ ինք անէճքի պտուղ, Աստուած կենաց նշխար է, իսկ ինք կաւէ գանգուած, եւ այլն: Եւ հոս Նարեկացին յանկարծ կը սկսի ստեղծել բանաստեղծական պատկերաւոր նոր տողեր:

Քանզի այն ո՞վ է որ արեւածագի լոյսին հասնելէ վերջ կը կասկածի որ կրնայ մնալ խաւարի մէջ,  
Կամ մօտիկ ըլլալով հանդերձ կեանքին՝  
կրնայ մահանալ,  
Կամ մօտիկ ըլլալ ազատութեան՝  
բայց բռնադատուի,  
Կամ շնորհներուն՝ բայց դատապարտուի,  
Կամ բժշկութեան՝ բայց վերքեր ստանալ,  
Հացի նոխրութեան՝ բայց անօթի մնալ,  
Գետի հոսանքին՝ բայց ծարուէն անջրի,  
Կամ մօտիկ ըլլալ Աստուածային Աջի խնամքին՝  
բայց գրկուած մնալ:

Ընթերցողը արդէն անդրադարձած պէտք է ըլլայ որ Նարեկացին մեծագոյն վարպետութիւնը կը կայանայ հակադրութիւններ գտնելու մէջ: «Մատեան Ողբերգութեան» էջերը լեցուն են նմանօրինակ հակադրութիւններով, որոնք սովորականին ու հասարակին սահմաններէն անդին կ'անցնեն ու կը դառնան գրական գիւտեր: Այս հակադրութիւնները որքան ալ դուրսին իսպաս մարդուն ու Աստուծոյ բաղդատութեան, անոնք աշխարհիկ կեանքի ընկերային կարգերուն համար ալ իմաստալից են եւ կերպով մը կը ցուցնեն կեանքի անհեթեթի զժպտութեան ինքններն ու զրկանքները: Մօտենալ ազատութեան, բայց բռնադատուիլ, մօտենալ խնճարի սեղանին, բայց անօթի մնալ, եւ դեռ ինչ:

Ռ. ՀԱՍՏԵՃԵԱՆ

## 20ՐԴ ԳԱՐՈՒ 4. Յ. Դ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՀԵՏ ԱՆՈՐ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իսկ ի՞նչ է վիճակը այսօր. որքանով մենք փոխարարեցրուեցան մէջ ենք յարատեւ զարգացումներու ենթակայ մեր շրջապատին հետ: Անշուշտ, իրեւ միջազգային ընտանիքին կողմէ ճանաչուած պետութեան մը մէջ գործող կուսակցութիւն, Դաշնակցութիւնը կը վայելէ այդպիսի դիրքի մը բոլոր առաւելութիւնները. ան անգամ է Ընկերվար Միջազգայնականին, այդ կառուցին միջոցով յարաբերութեան մէջ է աշխարհի բոլոր ընկերվարական կուսակցութիւններուն հետ, իր Ազգային ժողովի մէջ գործող պատգամաւորներու միջոցով կապուած է զանազան միջազգային կազմակերպութիւններու, անխափան պաշտօնական յարաբերութիւններ ունի Հայաստանի մէջ գտնուող օտար պետութիւններու դեպքանութիւններուն հետ: Դաշնակցութեան քաղաքական զիրքորոշումները յատկապէս, քանի որ անոնք կը ընդունուին կուսակցութեան ծրագրէն, ժողովներու եւ մարմիններու որոշումներէն են անկախ են անհատական կամ աշխարհային ինքնութիւններէ:

Բայց եւ այնպէս մեր կուսակցութիւնը ներկայիս բաւական հեռու է միջազգային քաղաքական ընթացիկէն. բայց մը, որ կրնայ դաշնակցական երկրասարգութեան կողմէ յաւանգնուիլ իրաւունքները: Արդարեւ, մարդկութիւնը ատենէ մը ի վեր մտած է համաշխարհայինացումն ինքնին, մէջ, Մարդկութեան տնտեսական համաշխարհայնացումը սկսած է աւելի քան երկու տասնամեակներ առաջ, սակայն այդ ընթացքի արագացումն ակադեմիկական մանուալը ինտերնացիոնալ Միութեան փլուզումէն ետք: Պետութիւններու միջեւ սահմանները մէկը միւսին տեւեւ կ'անհետանան, Միացեալ Եւրոպայի նման միջպետական տնտեսական կառույցները իրենց

սարգութեան մարտավարական շարժումները ապագայ կենսական յարգութիւններու երաշխիքը կրնան կազմել. այդ ուրիշ, որ համաշխարհայնացման ընկերային ժխտական հետեւանքներուն դէմ պայքարը կը ըլլի Դաշնակցութեան ծրագրի տարրական հոլովութենէն:

Երիտասարդութեան միջազգային յարաբերութիւններու բազմամակարդակ զարգացումը ունի ուրիշ՝ նոյնքան կարեւոր անմիջական հետեւանք մը. այն է, որ այդ յարաբերութիւններու ընթացքին, բազմաշահկութիւնը միջազգային մէջ, միաժամանակ տեղի կ'ունենայ դաշնակցական մտքի զարգացումը՝ անոր առողջ վերանորոգումը. այդ ձեւով դաշնակցական միտքը քայլ պահած կ'ըլլայ միջազգային բեմերու վրայ տեղի ունեցող մտաւորական անցումներու հետ: Նոր գաղափարներու կուտակումը նոր հորիզոններ կը բանայ. նոր կացութիւններուն յարմար նոր քաղաքականութեան մը որոգողութեամբ աւելի հնարաւոր կը դառնայ. տեսական աշխատանք տանելու կարողանալու ժառանգորդները: Դաշնակցութեան ժամանակները փոխուած են, բայց հարցերը մնացած են նոյնը. այսինքն շահագործող եւ շահագործուող հաւաքակառուցութիւնները միջեւ պայքարը մնացած է նոյնը: Երեւոյթները նոյնն են. փոխուած են պարզապէս անոնց անունները: Միջազգային քաղաքականութեան վրայ, ուրեմն, դաշնակցական երիտասարդութեան համար ընթացիկէն: Միջազգային այսօրուան ընդհանրութիւնը պարզ է, պայմանաւ՝ որ ճիշդ ձեւով բռնուի: Իսկ Միտքը արդի ժամանակներու ամէնէն կարեւոր խնդիրն է, որ դրուած է մեր առջեւ: Ինչպէս կ'ըսեն, «ամէն գործիք գին է, պայմանաւ՝ որ ճիշդ ձեւով բռնուի»: Իսկ Միտքը արդի ժամանակներու ամէնէն կարեւոր խնդիրն է, որ մեզմէ բաւական չափով պակաս է վերջին ժամանակաշրջանին. ուրիշ որեւէ մէկ տեսակ գէնքի ձեւաբերումն ու արդիւնաւէտ գործածութիւնը

այլեւս կախեալ են Միտքէն: Բոլոր հարցերու բարուք լուծումը կու գայ Միտքէն: 21րդ դարուն կարելի է կուտակել միայն 19րդ դարու գէնքերով: Դաշնակցութեան առարկայական արժէքը եւ ուժը անոր ապրող շարքերուն մտային եւ գործնական կողմէ կարողանալու ինքնուրույն վրայ հիմնուած է. մէկու կամ միւսին տկարացումը կը վնասէ ամբողջութեան: Պատմութեան մէջ միայն իրեւ ուղեցոյց կրնայ ծառայել. ան կ'օգնէ նոր երեւոյթները ճիշդ գնահատելու. ան արժէքներ ճշդելու եւ հարգատուութեամբ վերասահմանելու կը ծառայէ: Պատմութիւնը անցեալ է ու փորձառութիւն, իսկ դործելու համար կարեւոր է հոսող ներկան է եւ անհատական անհրաժեշտութեան կուտակումը նոր հորիզոններ կը բանայ. նոր կացութիւններուն յարմար նոր քաղաքականութեան մը որոգողութեամբ աւելի հնարաւոր կը դառնայ. տեսական աշխատանք տանելու կարողանալու ժառանգորդները: Դաշնակցութեան ժամանակները փոխուած են, բայց հարցերը մնացած են նոյնը. այսինքն շահագործող եւ շահագործուող հաւաքակառուցութիւնները միջեւ պայքարը մնացած է նոյնը: Երեւոյթները նոյնն են. փոխուած են պարզապէս անոնց անունները: Միջազգային քաղաքականութեան վրայ, ուրեմն, դաշնակցական երիտասարդութեան համար ընթացիկէն: Միջազգային այսօրուան ընդհանրութիւնը պարզ է, պայմանաւ՝ որ ճիշդ ձեւով բռնուի: Իսկ Միտքը արդի ժամանակներու ամէնէն կարեւոր խնդիրն է, որ մեզմէ բաւական չափով պակաս է վերջին ժամանակաշրջանին. ուրիշ որեւէ մէկ տեսակ գէնքի ձեւաբերումն ու արդիւնաւէտ գործածութիւնը

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Բ. ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԺՇԱԿԱՆ ԶՈՒԹԱՆ  
**ԿԵՐԱՍՈՒՄ**  
Կանաչազային «Բ. Կանաչեան» Երաժշտական Զոյթնախումբը կը սկսի 15 Սեպտեմբերին եւ կը շարունակուի ամէն օր բացի Շաբաթ օրերէն, կէսօրը ետք ժամը 3:00էն 7:00: Կերամուտ՝ 13 Կոկտեմբեր:  
ԾԱՆՕԹ.- Յանդեալ մանրամասնութեան համար դիմել երաժշտանոցի քարտուղարութեան. հեռ. 01-265899 եւ 01-249375:

*Vivez en lumière!*  
**G. AYANIAN & SONS**  
Dora, (01) 255222/3/4/5/6 - Gemmaye, (01) 447000-445396 - (03) 627728/9  
Fax: (01) 265167-582357; E-Mail: gasons@dm.net.lb  
www.ayanian.com

**ԱՅՀԻԼ AFHIL**  
**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**  
**RENT AND SALE**  
**AT HOME**  
• Wheelchair  
• Walker  
• Electric Bed  
• Manual Bed  
• Water Mattress  
• Cans  
• Sticks  
• Serum Tripod  
• Walking Frame  
**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**  
ՅՈՒՅԱՍՈՒՐ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՈՐԸ ԳՐԱՍԵՆՍԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԾԵԼԵ, Բ. ՅԱԿԿԵՆ (02) 242553/7  
**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**

# ԲԱՐԻ ԿԱՄԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՄԸ ... ՍԽԱԼ ԴՐՍԵՒՈՐՈՒՄԸ

Առանց բաժնեկալի մեր աշխատակիցից մտաձուլմանը, տեղ կու տանք ստորեւ ներկայացուած յօդուածին, յարգելով տեսակետի ազատութեան սկզբունքը: Բնականաբար, խմբագրութիւնս կ'ընդունի եւ տեղ կու տայ այս յօդուածին: Երբեք վանդակած բնագործութիւններուն հակադրուող գրութիւններուն հետ:

Դպրոցական ամէն վերամուտ մեր գաղութը կը համակէ խանդավառութեամբ, տենդոտ շարժումներով, մտահոգութիւններով, մտահոգութիւններով եւ իրարանցումով: Անցնող տարիներուն ընթացքին, լիրանանեան այնքա՛ն չարաղէտ պատերազմին պատճառով, մեծ հարուած ստացաւ մեր գաղութին, թուական պատկերը, եւ մանաւանդ՝ կրթական մարզը:

Կորսնցուցինք թիւ որակ, եւ մանաւանդ՝ ոգի: Աշակերտութեան թիւը շատ պակսեցաւ. ոչ միայն արտագաղթի, այլ նաեւ հայ ծնողներուն ցուցաբերած ոչ արժանազան կեցողութեան պատճառով: Կը շարունակեն ոմանք իրենց գաղութը ուղղել դէպի օտար կրթական հաստատութիւններ, որոնք անպայմանօրէն մերիներէն լաւը են: Եթէ ասոնց կը հետաքրքրէ օտար վարժարաններու պետական քննութեանց արդիւնքները, յաւ կ'ըլլայ, որ աչք մը նետան անցնող եղանակին ՀԱՅ վարժարաններէն յաջողած աշակերտներուն ցանկերուն վրայ: Եւ այս ծնողներէն ոմանք ինչա՛ն չեն քաշուիր նաեւ քաղաքներէ ուրիշ ծնողներ, որ հետեւին իրենց քայլին: Չեմ մտաբերում որ մեր կրթական հաստատութիւնները կատարեալ են. քա՛ւ իցի: Հարկ է, որ մեր վարժարաններուն պատասխանատուները միշտ հետամուտ ըլլան կրթական մեր հաստատութիւնները միշտ վերանորոգելու եւ քայլ պահելու ժամանակակից կրթական, գիտական եւ ընկերային նորութեանց եւ պահանջներուն հետ: Այդ ուրիշ նիւթ է թերեւս:

Ճիշդ է, որ կարգ մը չքաւոր ծնողներ իրենց գաղութները կը դրկեն պետական դպրոցներ, որոնք ձրի են: Բայց նաեւ այդ հաստատութեանց մէջ ու-

սումն ու կրթութիւնը շատ հեռու են գոհացուցիչ ըլլալէ: Իրենց գաղութները օտար վարժարաններ ուղարկողները ընդհանրապէս անոնք են, որոնք իրենց քաղութները շատ լայն բանալու «արժանիք»ը կը ցուցաբերեն հոն, օտարին անջնջ...

Մեկնելով դպրոցներուն ապրած դժուարութիւններէն՝ գաղութիս Ազգային վարժարաններուն սյուսնաքանդակները կը զիմած են նոր քայլի մը, որ կը ձգտի հայ աշակերտը ներգրաւել սոյն դպրոցներուն մէջ: Այն, ինչ որ յայտարարուեցաւ, կ'ըսէր, որ այս յանդուգն քայլին նպատակը օտար դպրոցները դիմողները ներգրաւելն էր: Մանկապարտէզի կրթութեան ընթացքին: Ասիական ինքնին շինիչ ցանկութիւն է, անտարակոյս: Դրսեւորուածը բարի կամեցողութիւն է, շատ մեծ ազդեցութիւն է: Սակայն թող ներուրի ըսել, որ այս քայլը մեզ պիտի տանի սխալ արդիւնքներու:

Արտայայտուած շատ դրական ներհայտակարաններուն զերկայ միջոցը տին մէջ շատ խորթ պիտի հնչէ մեր տեսակէտը, վստահաբար: Բայց եւ այնպէս, ժամանակին, արդէն իսկ ունեցած ենք նախընթաց: Նաեւ նախորդ շաններն այլ այնքան քաջաբերական չեն:

Պատերազմի տարիներուն, երբ գաղութին հոգեւոր եւ աշխարհիկ դեկավարութիւնները հայ աշակերտը դպրոցներէն դուրս չձգելու մտահոգութեամբ յայտարարեցին, որ ոչ մէկ աշակերտ նիւթականի պատճառով դուրս պիտի ձգուէր հայ դպրոցէն, օրին, աւերի եւ քանդուածի միջոցով: Եւ մէջ, իր շինիչ դերը ունեցաւ: Ժամանակի ընթացքին, սակայն, այդ քայլը վարժեցուց նաեւ վարժելու կարողութիւն ունեցող ընտանիքներուն չվարժելու ՀԱՅ դպրոցին: Մեր կրթական հաստատութեանց ներկայ տնտեսական տագնապը որոշ չափով կը պարտինք, այդ քաղաքականութեան, որ քարայար շահարկուեցաւ հայ մարդուն կողմէ: Եւ

հիմա նոր եւ շատ յանդուգն քայլի մը կը դիմուի կրթական պատասխանատուներուն կողմէ: Այս շարաշահելու «շնորհ»ը կրնան ցուցաբերել հայ ծնողներ, դժբախտաբար...

Այս բարի նկատումներով առնուած քայլին կիրարկումին նախօրեակին թող ներուրի հետեւեալ մտածումները յանձնել չկենան նիւթականի պատճառով:

Ա.- Այն հայ ծնողները, որոնք որոշած են իրենց գաղութները օտար հաստատութիւնները դրկել, իրենց մտադրութեանն ետ պիտի չկենան նիւթականի պատճառով: Անշուշտ պետական դպրոցներուն դիմողները այլ պարագայ են: Օտար դպրոցները դիմողները քսակ բանալու չեն, անտարակոյս: Դրսեւորուածը բարի կամեցողութիւն է, շատ մեծ ազդեցութիւն է: Սակայն թող ներուրի ըսել, որ այս քայլը մեզ պիտի տանի սխալ արդիւնքներու:

Բ.- Կարգ մը հայ ծնողներ «շնորհ» կ'ընեն իրենց գաղութները մինչեւ մանկապարտէզ, շատ շատ մինչեւ նախկին վարժարան, հայ դպրոց դրկելով: Ասոնք դարձեալ օտար դպրոց պիտի դրկեն իրենց գաղութները՝ վայելել ետք այս նոր կարգադրութեան բարեփոխումը: Ազգը մանկապարտէզի ՉՐԻ ուսումը պիտի տայ իրենց, իսկ իրենք իրենց գիտցածն են պիտի չմնան:

Գ.- Հայ ծնողները քայլ մը առաջ պիտի երթան ձրիակերութեան մէջ: Սխալ չհասկցուինք. շատ ծնողներ իսկապէ՛ս արժանի են աւելիին ալ, թերեւս: Սակայն կան շատ հայ ծնողներ, որոնք ամէն բանի վճարելու ատակ են: Ընդհատ, որ տնտեսական տագնապը կը հարուածէր ողորդ, բայց եւ այնպէս շատեր կրնան վճարել աւելիով: Պահ մը եթէ մեր աչքերը դարձնենք դէպի հովոցներու զբօսավայրերը կամ դիտենք վայելի պայելայ վայրեր, հայրութիւնը հոն, հակառակ գաղութին համեստացած թիւին, պատճառը ներկայութիւն է: Նուազի, պարի, պէս-պիսի ծուխե-

րու մթնոլորտի մէջ հայ մարդը շատ լաւ ծախսել կրնայ: Ասոնց սպասեակներուն տուած «պախեւ»ները եթէ մէկտեղուին, մեր բոլոր կրթական մտահոգութիւնները կը փարատին. այսպիսինքն ՄԻՎԱՐԵՐ, մեր մանկապարտէզը ձրի է, եկո՛ւր: Մինչ այսպիսինքնը հարկ է, որ վճարեն նոյնիսկ աւելիով:

Ամերիկայի մէջ մեզի օգնութեան հասնող կազմակերպութեանց նիւթական միջոցներուն մէկ տոկոսը կու գայ հոն ապրող արհեստաւոր համեստ մարդոց գրպաններէն: Մինչ մենք հոս ունենորին այլ կ'ըսենք «չըլլայ, որ մանկապարտէզի թոշակ վճարես»: Ինչո՞ւ:

Կրթական հաստատութեանց տնօրէններ, հոգաբարձուներ, յարակից եկեղեցիներու հովիւներ, թատար տնօրէնները, եթէ հայ «պարոն»ները ուղղորդեն վճարումները... Թիւ՛ր կուզ եւ պարտք ընելու գնով, հոն, դուրսի դպրոցներուն զանազաններուն առջեւ մեր հայու «արժանապատուութիւն»ը ծախսել չենք ծախսեր...

Դ.- Հայ ծնողներ իրենց ծնողական պարտաւորութիւնները առաւելագոյն կատարելու մղուած ունին: Իրենց չկողմ վայելածը առաւելագոյն կ'ուզեն շարունակել իրենց գաղութներուն: Հիմա ուրիշ է կացութիւնը:

Մկրտումեան իւրաքանչիւր արարողութիւն կը պսակուի փառաւոր խնձորով, որ հարսանեական ընդունելութիւններուն չափ ծաւալուն եւ ճոխ կ'ըլլայ: Կարգ մը ծնողներ, պարտք ընելու գնով, անպայմանօրէն այս մկրտութեան խրատական մկրտեալը, իր պիւպեռով զրկած, այդ բոլորէն բան իսկ չի հասկնար:

Տարեդարձները, հետզհետէ, հակառակ տնտեսական ծանր կացութեան, շատ մը հայ ծնողները կը մղեն Մտք Տոնալոց եւ այլ հաստատութեանց մէջ կատարելու մթնոլորտի մէջ փառաւոր հաւաքոյթներ սարքելու: Երեխան, ղեռ ձեռքի պիւպեռով չենտած, ծնողներուն բարեհաճ թոյլտուութեամբ կամ քաջալերանքով, գլխիկին մագերէտը կը հաճուցնէ չի գրկուիր: Հազիւ պարմանի դարձած՝ ըլիջայինը կը

կախուի գօտիէն: Ինթըր-նէթ քաֆէներու մէջ հայ երեխաներ կը ծախսեն բաւական առատաձեռնութեամբ:

Խաղավայրերու մէջ հայ երեխաներ, տեսակետեակ սարքերու վրայ, բարձրաձայն կը ճռուողեն ու կ'երջանկանան՝ առատ դրամ թափելով:

Մանուկներուն «խաթը»ին շայէի բաժանորդ կ'ըլլան հայ ծնողներ:

Ի՞նչպէս կարելի է հանդուժել, որ հայ ծնողը իր վայելքին համար շուշիւ առանց հաշիւի, իսկ ազգը տագնապի այդպիսինքնուն համար:

Ամրան եղանակին, երբ Լիբանանի ամէն գիւղի կամ հնապիտական վայրի մէջ փառասուն կը սարքուի, հայ մարդը պատուաւոր ներկայութիւն կ'արձանագրէ հոն՝ վճարելով առատաձեռնօրէն: Դուրսէն եկած տեսակ-տեսակ խումբեր արհեստագէտներ, երբեմն նոյնիսկ «օլիմպիկ»ներ կը քաջալերենք առաւելագոյն չափով: Այդպիսինքնուն ալ կ'ըսենք «մի՛ վճարեր, միայն թէ՛ ըր՛ որ գաւազ մեզի»:

Մայրեր, իրենց գաղութները վստահած մանկամտերի մը կամ օտարագրի սպասուհիի մը խնամքին, շուշիւ կը հատուցեն «սուպիլեէ սուպիլեէ» մագերէտով...

Հայրեր, որոնք տնտեսական այս ծանր կացութեան բերմունց գոհողութիւնը յանձն առած են գոհանալով ճերմակ պիտակով ուխտի խմելով, ժամանակին սեւ պիտակով իր խմէին խեղճերը: Ասոնց ընտրութիւնը թեթեւեթեւ կը քայլուի... Ինչո՞ւ...

Շարքը կարելի է երկարել: Բա՛ւ է այսքանն ալ: Այսպիսի մթնոլորտի մէջ մենք կ'ըսենք «հայ դպրոց եկուր միայն. վճարելու պէտք չկայ»:

Մեր բոլոր վարժարանները կը տառապին նիւթական գետնի վրայ: Երբ դպրոցը ինք սնանկութեան սահմաններուն կը մտնեն, ինչպէս կրնայ այսքան առատաձեռնութիւն շարունակել ինքնիրեն:

Չ.- Ոմանք կրնան մտածել, որ ձրիակերութեան առաջին քայլը կրնայ ըլլալ այս: Այդ ձեւով մտնեցած կ'ըլլանք եւրոպական երկիրներու կամ Ամերիկայի որդեգրած քաղաքականութեան: Կրթութիւնը կ'ը-

լայն անվճար: Գեղեցիկ բան է թերեւս, սակայն պէտք է մտաբերել, որ եւրոպացի կամ ամերիկացի ծնողը, եթէ դպրոցական չի վճարեր ուղղակի ձեւով, միւս կողմէ հակաին տուրք կը վճարէ: Իր վաստակին մէջ կարելու տոկոսը պետութեան կ'երթայ, որ իր կարգին, ձրի ուսում կը հայթայթէ նախկին: Հոս, մեր մօտ քանի՞ տոլար կը վճարուի մեր կրօնական, կրթական եւ ազգային հաստատութեանց, որ հայ դպրոցը դիմէ այսպիսի քայլի:

Է.- Կ'ակնկալուի, որ այս քայլով կարելի պիտի չհայ աշակերտներով: Շատ բարի: Բայց վախնամ, որ այս նպատակին իրագործման ճամբուն վրայ այլ հայ վարժարաններ սուղ պիտի վճարեն իրենց մանկապարտէզները կորսնցնելով: Նկատելով, որ մանկապարտէզը դպրոցի մը հիմն է, գայն կորսնցնելով՝ դպրոցը ինքզինք կրնայ կորսնցրնել...

Այսպիսի կացութեան մը դիմաց այլ հայ դպրոցներ կրնան հարկադրուիլ այլ ծայրայեղութեանց դիմելու, օր մըն ալ հայ ծնողներուն կրնայ առաւելագոյն նիւթական պարգեւներ, միմիայն իրենց գաղութները Հայ դպրոց, ազգային կամ ոչ, դրկելու սիրոյն...

Ը.- Եթէ այս քայլին նպատակը ՀԱՅ մանուկը բերելն էր, ապա հարկ էր, որ բոլոր հայ դպրոցները, սկսելով ազգայիններէն, ձեւարարէն մինչեւ կաթիլը, աւետարանական եւ բարեգործական բոլոր դպրոցները համագործակցութեամբ եւ ձեռք ձեռքի տալով ճամբայ ել-

լին: Ծնտեսական-նիւթական տագնապի մէջ տուայտող ազգային վարժարանները եւ միւսները աւելի ծանր տագնապներու պիտի ենթարկուին: Այդ կացութեան մէջ աւելի պիտի ծանրանայ արդէն իսկ ծանրածանր կացութեան մէջ կարելու տոկոսը պետութեան կ'երթայ, որ իր կարգին, ձրի ուսում կը հայթայթէ նախկին: Հոս, մեր մօտ քանի՞ տոլար կը վճարուի մեր կրօնական, կրթական եւ ազգային հաստատութեանց, որ հայ դպրոցը դիմէ այսպիսի քայլի:

Ը.- Եթէ այս քայլին նպատակը ՀԱՅ մանուկը բերելն էր, ապա հարկ էր, որ բոլոր հայ դպրոցները, սկսելով ազգայիններէն, ձեւարարէն մինչեւ կաթիլը, աւետարանական եւ բարեգործական բոլոր դպրոցները համագործակցութեամբ եւ ձեռք ձեռքի տալով ճամբայ ել-

Երակցանքներու համար ըսենք, որ խոր տագնապ մը լուծելու համար առնուած այս քայլը վստահաբար արժանացած է ուսարկուիլ նիւթական պարգեւներ, միմիայն իրենց գաղութները Հայ դպրոց, ազգային կամ ոչ, դրկելու սիրոյն... Իսկ մենք, իբրեւ հայ աւետարանական, քայլ մը եւս կը մղուինք դէպի անտարբերութիւն եւ մեղկացում:

ՉԻՆԱԿԱՆ

**Ս. ԱԳՆԷՍ**  
**ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆ**  
 ԸԵՌ. 01/261139 ՊՈՒՐՃ-ՇԱՍՈՒՏ

2003-2004 դպրոցական տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները մայիսին եւ նոր աշակերտներու համար կը սկսին Երկուշաբթի, 8 Սեպտեմբերէն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 9:00ԷՆ մինչեւ 13:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Կրթական յանձնախումբը կրթամասսոյի դիւրութիւնները պիտի ընծայէ յաջողակ սաներու, միւսական դժուարութիւն ունեցող աշակերտներու եւ մանուկ մանկապարտէզի փոքրիկներուն համար:

ՎԵՐԱՄՈՒՏ  
 ● Պրոֆիլ' Է - Ը - Թ դասարանները՝ Գործըշաբթի, 24 Սեպտեմբեր  
 ● Նախակրթարան՝ Երկուշաբթի, 29 Սեպտեմբեր  
 ● Մանկապարտէզ՝ Երկուշաբթի, 6 Շուկտեմբեր

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ  
 Ս. ԱԳՆԷՍ ՎԱՐժԱՐԱՆԻ

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ**  
**ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ**

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Ընտանային)

Ընտանային Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի 2003-2004 տարեշրջանի հինգ թէ նոր ուսանողներու արձանագրութիւնները կը շարունակուին առաւօտեան ժամը 10:00ԷՆ 1:00, Ծաղկաձորի Սելանքոն եւ Կայլ Արլանեան ձեւարարի մեր գրասենեակներէն ներս:

Շեղանակները կրնան անձամբ դիմել գրասենեակ, եւ կամ կապուիլ՝

Ընտանայն՝ 04-712603  
 04-712604  
 03-429685

Fax: 04-712601  
 E-mail: djemaran@inco.com.lb

Մուտքի քննութիւնները՝ 1-3 Շուկտեմբեր 2003ին: Վերամուտ՝ 6 Շուկտեմբեր 2003ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

SPECIAL SURVEY OF THE WORLD ECONOMY

Europe, after Sweden's no  
Killing Arafat is Wrong  
Is 3G telecoms doomed?  
India's economic optimism

**The Economist**

SEPTEMBER 28TH 2003

**The charming outcome of the Cancún trade talks**



Միջազգային վարկ վայելող քաղաքական - հասարակական շաբաթաթերթի մը համար անշուշտ մեծ համարձակութիւն կ'ենթադրէ կողքի առաջին էջով նման պատկերով մը հանդէս գալ: Եւ «Տը Իքոնոմիսթ» չէ վարանած այդ համարձակութիւնը ցուցաբերել:

Հարցը կը վերաբերի Զանքուցի ժողովին, ուր յատակ վիճակ մը ի յայտ եկաւ աշխարհի «հարուստ» եւ «աղքատ» դասակարգերուն միջեւ...

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵՅԻՔ**  
**«ԱԶԳԱԿ»ԻՆ**

Վճարելով «Ազգայն»ի փարեկան բաժանորդագիրը, մեր ընթերցողները օրաթիւրին հետ կը ստանան նաեւ

**ԱՅԳԱԿ**

Հարաբարերը, ամսական յանդիմաններ «Պրոֆիլ-Մագիկ», «Անախիպ», «Նախաւարդ»ն ու «Ազգայն-ամսաթիւր»ը:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԿՐՆԱՔ ՎՃԱՐԵԼ ԸՍՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԸ**

«ԱԶԳԱԿ» օրաթիւր, Շաղկապան կիտրոն  
 Հեռ. 01-260115, 01-241274, 01-258526  
 Fax: 01-258529  
 E-mail: aztag@inco.com.lb  
 website: www.aztagdaily.com

**www.aztagdaily.com**

# ԸՆԿԵՐԱՅԻՆ ԲՈԳԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

## ԱՄՈՒՐԻՆԵՐՈՒՆ ԹԻՒԻ ԱՃԻՆ ՀԵՏ ԿԸ ՆՈՒԱԶԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ

Պատկերներն ու ընտանիք կազմելը մարդու կեանքին բնական մէկ հանգրուանն է, երբ մարդ կ'ապրի մեծ իրադարձութիւն մը, եւ անոր կեանքը ամբողջովին տարբեր ընթացք եւ ուղղութիւն կը ստանայ:

Այդ հանգրուանը ծնունդ կ'առնէ սիրոյ, փոխադարձ յարգանքի ու հասկացողութեան զգացումէն. անհատը կը միանայ իր «երկրորդ կէսին»՝ իր կեանքի մնացեալ օրերը անոր հետ անցընելու, զաւակներ ունենալու, գանձեմք մեծցած տեսնելու եւ իր թոռներով շրջապատուելու տեսլականով:


Ամուսնութիւնն ու գոյգին յարաբերութիւնը եւս ունին իրենց անգիր օրէնքները, ժամանակին հետ առնչուող եւ անոր հետ կապուած սկզբունքներն ու եզրերը:

Հին ժամանակներուն ամուսնութեան որոշ տարիք մը գոյուցելու ունէր, եւ տղանքն ու աղջիկները, երբ շրջանցէին այդ տարիքը, կը սկսէին մտահոգուիլ իրենց ապագայով: Այդ տարիքը շատ հին ատեն կը նկատուէր 14 - 15ր, իսկ աւելի ուշ ան բարձրացաւ 17 - 18ի: Մարդիկ կը կարծէին, թէ այդ տարիքին կամ առաւելագոյնը քանի մը տարի ետք չամուսնանալու պարագային, իրենք ամուրի պիտի մնան եւ առանձին պիտի ապրին իրենց կեանքը: Այս մտածելակերպն ու համոզումները այնքան արմատացած էին, որ տղանքը նոյնիսկ որոշ տարիքի մը հասնելէ ետք, հաւատարմով, թէ իրենց կարգը անցած է, կը դադարէին կեանքի ընկեր մը փնտռելէ, որովհետեւ այդ տարիքէն ետք կարելի չէ ամուսնանալ:

Նոյնն էր պարագան աղջիկներուն, որոնք որոշ տարիքէ մը ետք կը սկսէին յուսախաբուութիւն ապրիլ, տխրիլ եւ նոյնիսկ ընկճուածութիւն ունենալ:

Ժամանակի ընթացքին եւ պայմաններու փոփոխութեան հետ փոխուեցան նաեւ այս ըմբռնումներն ու համոզումները, եւ ամուսնութիւնը այսօր տարիքի հետ մեծ առնչութիւն չունի: Թէ էլ բնական պայմաններու մէջ ապրող անհատներուն եւ կեանքի բնական ընթացքին համար միջին տարիք մը գոյուցելու ունի, սակայն այս տարիքը կը տարուբերի ենթակայներուն ապրած պայմաններուն եւ միջավայրին հետ:

Արարական երկիրներուն մէջ, մանաւանդ իրական



